

Մի՞թե կարծեք արդար Աստված
Անունս առնե յուր դատաստան:

Բավ է, որքե սորն ի պատյան,
Ողջունեցեք խաղաղությոյն:

ԽՈՍԲԸ ՀՐԱԺԱՐՄԱՆ ԽՐԻՄՅԱՆ Ա. ՊԱՏՐԻԱՐԻԻ ՀԱՅՈՑ
1873 օգոստոս 3-ին

Այսօր իմ արձակման օրն է, կաղաչեմ, որ
թույլ տաք այս տաճարին մեջ, հայոց երես-
փոխանության առաջ, մի քանի խոսք խո-
սիմ. և արձակում խնդրեմ այս Աստանեն,
որ 1869 թվույն սեպտեմբեր 4-ին յուր քվեի
ազատ ընտրությամբ զիս կապեց և Տարո-
նեն վարեց մինչև ցայս վայր: Նույն տարվո
նոյեմբեր ամստ սկիզբը, Պոլստ Մայր եկե-
ղեցւոյ բեմին վրա մեր գահակալության հան-
դեսն կատարվեցաւ: Չգիտեմ, կհիշե՞ք, այն
իմ Ծաղկազարդի օրը, ես խոսք տվի Ձեզ և
ուխտեցի այսպէս. «Երեսփոխանք և ժողո-
վո՞րդ հայոց, դուք զիս բազում դժվարու-
թյամբ հայս գահ բարձրացուցիք, կուխտեմ
ահա՛ հանդիման Ձեր, որ առանց աշխատու-
թյան ես ինքնին կիջնամ այս գահեն, խո-
նարի հարգանքը համբուրելով համայն ազ-
գի կնիքը կրող Ձեր վճռագիրը. զի օրինոք
կապեցաւ. կփափաքիմ դարձյալ օրինոք ար-
ձակիլ: Միայն սա կաղաչեմ, վասն փառաց
եկեղեցւոյ և հայոց ազգին, խաղաղությամբ
թողե՛ք որ երթամ:

Այո՛, մեծ ակնկալությամբ ընտրեցիք զիս
ու բերիք. գիտե՛մ, դժվարին է դյուրությամբ
թողուլ: Ի՞նչ էր արդոյր Ձեր և հանուր Թուր-
քիո հայոց ակնկալությունը: Ահա վասիկ.
կակնկալեիք որ Խրիմյան Հայաստանայց
եկեղեցւոյ փառք կհավելուր. կհուսայիք թե
նա եկեղեցւոյ պաշտոնեից աղավաղ դյու-
րոյունը կվերանորոգեր. կհավատայիք որ նա
անդադար քարոզելով՝ դպրոց, դաստիարա-
կություն, լույս և այլն. ազգային հատաչդի-
մության կառք կվարեր և դեպ ի յուր նպա-
տակ կտաներ: Թո՛ղ այս մեծ ակնկալություն,
մի ևս այն էր, թե Խրիմյան, իբրև սահմանա-
դրասեր պատրիարք նա ինքն ձեռնհաս պի-
տի լինի շուշտ և արագապէս յուր արծվի
թևերով սահմանադրությունը բառնալ ու տա-
նել-սփռել Հայոց աշխարհին վերա. քաղա-
քացին և շինական, գիտուն և ռամիկ առհա-
սարակ միահամուռ մկրտել՝ յուսավորել և
նոր սահմանադրական ժողովուրդ կազմել:
Առավել քան զայստսիկ, ամենամեծ ակնկա-
լություն զավատացի ժողովրդոց այն էր, թե
Խրիմյան պատրիարք եղալ, ուրեմն ավե-
տի՛ս, պետք էր որ ազատվինք հարստահա-
րության ամեն ճնշումներից:

...Իմ արտի գեղուն զգացմամբ և անկշիռ
երևակայությամբ չափեցի թե արդոյր Տա-
րոն թողում, Վարազ թողում, իմ այն փոքրիկ
ազարակները, հորս կաշխատեի և կմխի-

թարվեի գոնե դուգնաքս վաստակոք, ու եր-
թամ Մեծն Բյուզանդիոն հայոց պատրիարք
լինիմ, պիտի կարենա՞մ ասկե ավելի ազգին
շահաբեր լինել: Անկեղծաբար խոստովանե-
լով՝ ես կճանաչեի զիս, թե պատրիարքու-
թյան բարձր Աթոռին վայելուչ հատկություն-
ներ չունեի, ոչ իմաստությամբ, ոչ ուսումնա-
կանության հանճարով, ոչ քաղաքագիտու-
թյամբ և ոչ մի քանի լեզվաց հմտությամբ:
Այսչափ տկարությամբ տե՛նչանք մղեց զիս հայս
պաշտոն. ոչ, այլ միայն ազգի սերն և հայ-
րենյաց օգնելու եռանդն:

...Այս դատաստանին դեմ **Այսօր և Հա-
վիտյան կհողոքեմ.** զի Խրիմյան հառաջ քան
զվաթսուներորդ թվական 1820 ապրիլ չորս՝
անդստին ի մորե սահմանադրութենեն հա-
ռաջ սահմանադրական ծնած է և ցորեկ ա-
րեվուն յուսով աշխարհ եկեր է, խիստ **Գըծ-
վարին է գանի իբրև Հակասահմանադրա-
կան ամբաստանել:** Ես սահմանադրությունը
գրկել կուզեմ, բայց չեմ ուզեր գանի այնչափ
ճշդել ու սեղմել, մինչև գրկիս մեջ մեռնի:

...Ներողություն կխնդրեմ, այն ամեն թե-
րությանց համար, զոր իբրև սխալական
մարդ գործած եմ. Ներողություն կխնդրեմ
համայն երեսփոխանական դասեն. Ներո-
ղություն կխնդրեմ իմ վաստակակից կրո-
նական ժողովոյս և հարց դասեն. Ներողու-
թյուն կխնդրեմ քաղաքական ժողովոյ մեծա-
պատիվ անդամներեն. ես զձեզ չամբաստա-
նեցի, այլ դրությունն ամբաստանեցի, որո
նողությունն և փոփոխությունն օրենսդիր
ժողովույն կպատկանի:

Այլևս կմնա ինձ օրհնել համայն հայոց
ազգը և հրաժեշտ մատուցանելով առ երես-
փոխանությունդ հայոց՝ Վահանա Գողթնաց-
վույն պէս պաղատիլ.

«Արձակեցե՛ք, որ տեսանեմ գորչափու-
թիւն աւերածոց երկրին իմոյ հայրենեաց»:

Թույլ տվեք այս Աթոռեն ելնեմ և հոգ
նստիմ. թերևս այսու խաղաղության օրինակ
մի ընծայեմ իմ հաջորդիս: Թո՛ւյլ տվեք, եթե
իբրև պատրիարք՝ չի կարացա՞ իբրև Խրիմ-
յան վարդապետ գործել, թերևս իբրև Խրիմ-
յան՝ կարենամ իբրև պատրիարք գործել:

Երթաւ քարյալ, Արծվի՛, ասացեք, գնա՛-
գտիր Վարազ քու սիրած խոցն ու գրիչ և
սակավիկ մի թանապուր: Հո՛ն մնացիր, զի
նալ խոտվյալ փութա ի Նավահանգիստ: